ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/73

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով Վարդենիսի համայնքապետարանի կարիքների համար Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ 21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից 23.08.2021թ. ներկայացված (24.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/73 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Կամարաշար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 23.08.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու նպատակով հայտարարված թիվ «ԳՄՎՀ- ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. օգոստոսի 18-ի թիվ 2 արձանագրության 2.1 կետի այն մասով, որով «Կամարաշար» ՍՊԸ-ի

ներկայացրած հայտը ճանաչվել է հրավերին անհամապատասխան և 3-րդ կետի այն մասով, որով «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, ընդունված որոշման դեմ

1. *Բողոքի փաստական հիմքերը*

1.Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու նպատակով հայտարարվել է թիվ «ԳՄՎՀ- ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հարցում:

2. Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել թվով երեք կազմակերպություն, դրանք են՝ «Կամարաշար» ՍՊԸ-ը, «Որդի Տարոն» ՍՊԸ-ը և «Մուրադյան քոնսթրաքշն» ՍՊԸ-ը:

3. 2021թ. օգոստոսի 18-ին Գնահատող հանձնաժողովը կայացրել է թիվ 2 արձանագրությունը, որի 2.1 կետում նշել է, որ «Կամարաշար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ մատնանշելով, որ գնային առաջարկի վերաբերյալ սխալ նշում է կատարվել:

4. 2021թ. օգոստոսի 18-ին Գնահատող հանձնաժողովը կայացրել է թիվ 2 արձանագրությունը, որի 3-րդ կետով բավարար է գնահատել «Որդի Տարոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5. Վերը նշված արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

6. Վերը նշված արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը որոշել է տվյալ հայտարարության հրապարակման օրվանից 5 օրացույցային օր հետո մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

7. 2021 թվականի օգոստոսի 19-ին Պատվիրատու՝ Վարդենիսի համայնքապետարանի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

2. Բողոքի իրավական հիմքերն ու հիմնավորումները

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ «Գնումներ, մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ

ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում»:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի ….. և որոշումները»:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակից, երի գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման»:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Կամարաշար» ՍՊ Ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ, համաձայն որի՝ նա պետք է ճանաչվեր 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով վերը նշված օրենքի կետը՝ գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը Գնահատող հանձնաժողովի կողմից պետք է իրականացվեր առանց ԱԱՀ դաշտի մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ըստ էության ոչ մի մասնակցի իրավունք չի խախտվել, ավելին՝ եթե Արժեք սյունակի թվին գումարում ենք ԱԱՀ սյունակի թիվը, ապա ստանում ենք Ընդհանուր արժեք սյունակի թիվը լումայի ճշտությամբ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝

«2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված օրենսդրությամբ՝ ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ Գնահատող հանձնաժողովի 2021թ.-ի օգոստոսի 18-ին կայացված որոշմամբ ոտնահարվել է «Կամարաշար» ՍՊ Ընկերության իրավունքները:

Մատնանշած հանգամանքերը հիմք ընդունելով

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. դադարեցնել թիվ «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հայցման 2021թ. օգոստոսի 18-ին Գնահատող կայացրած թիվ 2 արձանագրության 2.1 կետի այն մասով, որով «Կամարաշար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ճանաչվել է հրավերին անհամապատասխան, կայացված որոշումը,

2. դադարեցնել թիվ «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հարցման 2021թ. օգոստոսի 18-ին Գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 2 արձանագրության 3-րդ կետի այն մասով, որով «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, կայացված որոշումը,

3. դադարեցնել թիվ «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հարցման 2021թ. օգոստոսի 18-ին Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը,

4. դադարեցնել թիվ «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ21/15» ծածկագրով գնանշման հարցման 2021 թվականի օգոստոսի 19-ին Պատվիրատու Վարդենիսի համայնքապետարանի կողմից պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը,

5. պարտավորեցնել Պատվիրատուին՝ Վարդենիսի համայնքապետարանին, ընդունել «Կամարաշար» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը՝ ներկայացնելով միջնորդություն նիստը հետաձգելու վերաբերյալ:

Միջնորդությունը 27.08.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մերժվել է, քանի որ միջնորդությանը կից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Ընկերության ներկայացուցչի նիստին չներկայանալու պատճառների հարգելի լինելու հանգամանքը:

2. <u>Վարդենիսի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Վարդենիսի համայնքապետարանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վարդենիսի համայնքապետարանի կարիքների համար Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ 21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Կամարաշար» և «Որդի Տարոն» ՍՊ ընկերությունները:
2. «Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ ձևով՝

Չափաբաժիններիհամարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	4 770 166 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար հարյուր վաթսունվեց)	954 034 (ինը հարյուր հիսունչորս հազար երեսունչորս)	5 724 200 (հինգ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր)

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը

համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, իսկ «Կամարաշար» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում՝ գնային առաջարկը սխալ է լրացված (հիմք հրավերի 5.2 կետի դ ենթակետ):

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Կամարաշար» ՍՊԸ-ի 23.08.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ***ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով***, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. ***<u>գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,</u>***

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով***:

Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հանձնաժողովը մերժում է այն հայտերը,</u>*** որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ **<u>եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի համաձայն՝ ***մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:...

Նույն կետի դ) պարբերության համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

(...)

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը,*** որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ ***դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպես, Վարդենիսի համայնքապետարանի կարիքների համար Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ 21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ

մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Կամարաշար» և «Որդի Տարոն» ՍՊ ընկերությունները:

«Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ ձևով՝

Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Վարդենիս քաղաքի մուտքի, կենտրոնին հարակից տարածքի համայնքապետարանի շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	4 770 166 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար հարյուր վաթսունվեց)	954 034 (ինը հարյուր հիսունչորս հազար երեսունչորս)	5 724 200 (հինգ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, իսկ «Կամարաշար» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում՝ գնային առաջարկը սխալ է լրացված (հիմք հրավերի 5.2 կետի դ ենթակետ):

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի, ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ վերջինիս կողմից Հավելված 2-ում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկվել և ներկայացվել, մասնավորապես՝ 4 770 166 ՀՀ դրամի նկատմամբ ԱԱՀ-ն (20 %) կազմում է 954 033.2 ՀՀ դրամ, մինչդեռ Ընկերության ներկայացրած գնային առաջարկում ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 954 034 ՀՀ դրամ, արդյունքում սխալ է հաշվարկվել նաև պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գինը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ «Կամարաշար» ՍՊԸ-ի հայտը հրավերի

պահանջներին անհամապատասխան գնահատելու վերաբերյալ, իրավաչափ են, ուստի գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված այն դիտարկմանը, որ *«Կամարաշար» ՍՊ Ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ, համաձայն որի՝ նա պետք է ճանաչվեր 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ համաձայն օրենքի՝ գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը Գնահատող հանձնաժողովի կողմից պետք է իրականացվեր առանց ԱԱՀ դաշտի մասում նշված հարկի գումարի հաշվարկման*, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ նման դիտարկումն անհիմն է, այն, որ մասնակիցների գնային առաջարկների համեմատումը և գնահատումն իրականացվում է հիմք ընդունելով գնային առաջարկի «Արժեք» բաղադրիչը, չի նշանակում, որ գնային առաջարկի հրավերի պահանջներին համապատասխան ներկայացվելը պետք է գնահատվի միայն «Արժեք» բաղադրիչի մասով, գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնային առաջարկի գնահատումն իրականացվում է ամբողջությամբ՝ հաշվի առնելով լրացման բոլոր պայմանները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կամարաշար» ՍՊԸ-ի կողմից 23.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**